



# Հ Ա Ն Դ Ի Ս Մ Ե Ս Բ Ո Վ Պ Ե Ա Ն

Հրատարակի ամեն ամսու մէկին :  
 Մտորագրութեան տեղերն են  
 Ղարթա Յ. Միւհէնտիսեան տղարանը .  
 Չմիւռնիս Թանգարան Վաստուրական Ընկերութեան :  
 Միջագիւղ վերձանութեան Թանգարանը :  
 Թուշիկին գրատնակ Բէրտահճի խան :

Տարեկան գինն է կանխիկ . 60 զուբուշ  
 Վեցամսեայ " " 55 "  
 Դուրս երթալիք հանդէսներու ճամբու ծախքը առնողին  
 վրայ է :  
 Մտորագրութիւնները առաջին թիւէն կ'սկսին :

1 ՅՈՒՆԻՍ

Ե. ՏԱՐԻ 1862

ԹԻԻ 12

## Ա Ջ Դ Ա Յ Ի Ն

ՍՐԲՈՑ ԹԱՐԴՍԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՍ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Սօր մի մերձ ՚ի մահ հիւանդութենէ յանկարծ ՚ի կենդանութիւն դառնալ որչափ ցընծութեան առիթ կըլլայ իր հարազատ որդւոց, նոյնէն աւելի խնդութիւն կը պատճառէ մեզ սոյն մեծահամբաւ Վարժարանիս բարեկարգութիւնն ու որ ըստ օրէ ՚ի լաւանդր յառաջագիմելը մեծամեծ յոյսերը տեսնելը, որոյ մէջ մեր մանկական փափուկ հատակներ անցուցինք նորա անուշահամ գիտութեան աղբէրէն մեր ծարաւը անցունելով : Ստուգիւ կըսեմք, անպատմելի խնդութեամբ կը լեցուին մեր երախտագէտ սրտերը երբ մեր խնամաշատ մօրը բարեկենդանութիւնը կը տեսնենք, որ գրեթէ ամբողջ տարի մի, այն ամբողջ տարի մի մահուան անկողնոյն մէջ անօգնական կը տառապէր, ընդ որ և մեր սիրաբ խորին խոցուած կողբայինք լռին ու յուսահատեալ մի նման, բայց այժմ գոհութիւն լստուծոյ թաղական խորհրդոյ մեծարդոյ ու ազատեր Միջագիւղ աջաշուրջ

հսկողութեամբ և խնամօքը իր այն ցաւալի հիւանդութենէն գրեթէ բոլորովին ազատած՝ որ ըստ օրէ դէպի բարեւոք յառաջագիմելութիւն կուղղէ իր քայլեր, սրբ լաւ ծանօթ են նոյն ցանկալի ճամբային, թէև տարի մի կառած ու հիւանդութենէ բռնուած կանգ առաւ : Եւ քաղցր է մեզ յոյժ տեսնել զի այն նաւը՝ որ զմեզ մեր ցանկալի նպատակին հասոյց ՔԱՋ ՂԵԿԱՒԱՐԻ մի միջնորդութեամբ, շատ ու գրեթէ անթիւ վտանգներու և ալեկոծութեանց յաղթելով, այսօր դարձեալ բազում նուաաստիներ առած ուրիշ նոյնպէս հմուտ Վեկաւարի մի հսկողութեանը յանձնուած, հողմուռոյց առաջաստիւք դէպի լուսաւորութեան ցանկալի Նաւահանգիստը կրննանոց անխոչնդոտն, և երանի թէ առանց հակառակ հողմոց և ալեկոծութեանց անընդհատ շարունակէր իր քայլերը ՚ի խնդութիւն մեր և համօրէն Միջագիւղ բարեգլգած սրտից :

Ե Ր Գ Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ա Կ Ա Ն

ԱՐՆՈՒ ԱՌ ԶԱԻԵՆ

Ղղաւնիս

Գեղանի

Սէր սրաիս

Նաղերի .

Գու իմ յոյս

Զքնաղ կոյս :

Գիտցիր զի սիրաս բեղ համաք

Հալի մաշի անդադար ,

Չիկայ հոն տեղ ուրիշ բան

Բայց քու սէրդ աձկական :

Որով զիս

Բորբորէ

Ու հողիս

Կը նեղէ ,

Գու իմ լոյս

Շքեղ կոյս :

Բանամ սիրաս եկ նայէ

Ու տես թէ օվ հոն կիշխէ ,

— Գու Սէր , արքայն իմ սրաի

Բաղմեսդ յիւրում դահ ոսկի :

Ղյն նա

Կը հրամայէ

Ինչ առնել

Ինձ պէտք է ,

Սիրուն կոյս

Աչացս լոյս :

Թող անդամ մի քոյդ տեղե

Թուիմ հանգչիմ անուշակ

Տեսնեմ հոն որ ու արե

Զի սէրդ ըրեր զիս սխալ :

Հոող անուշ

Գու քնքուշ

Կարմիր վարդ

Արաիս դարդ

Ապաւենդ

Իմ ԶԱԻԵՆ

Բայ պարտիզիդ փակ գուներ

Թող հոտոտամ այն թերթեր

Որոյ քու բնակը քաղցրահոտ

Բանան զսիրս իմ մողծոս :

Տուր ինձի

Բանային

Քոյդ սրաի

Կաթողին ,

Բանամ ես

Մանեմ ներս :

Մ՛հ քու է ալ գթամ յիս

Ազատ ըրէ զիս գերիս

Որ շղթայովդ պինդ կապուած

Տանջիմ յուէտ բորբորած . . . :

Ա Պ Ե Ր Ը Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի ծնորայի վաճառականի մի ոքդին թափ մաս ինքը անուն , իւր ծաղիկ հասակին քասն ներբորդ տարին հաղիւ լնոյուցած , շահասիւրութիւնը գրգռեց զինքը Վրեմուեան Հնդկաստան երթալ . ամենն ին բանի տեղ չը գըրաւ երկար նաւարկութեան մի վաանգները . ուստի մտաւ Վրիլէս անուն նաւը , որ քիչ օրէն այն կողմերը երթալու կը պատրաստուէր , ճամբայ երաւ հօրմէն ընդունած մէկ դրամագլտով , երկար ու տաճանելի ճամբորդութենէ մի ետքը վերջապէս կը տեսնուի հեռուէն Վերիպայի ցամփքը . նաւը փոքրիկ ծոցի մը մէջ խարխախ նետեց՝ ուր նաւապետը ջրոյ և ուրիշ պաշարներու կարօտութիւնը տեսնելու համար , մտկոյիլ ծովը իջեցուց և պատուիրեց իւր մարդոցը որ ցամփքը երթալով պէտք եղածը ձորեն : Թուլմասն ալ նոյն երկիրը տեսնելու համար հետաքրքրութիւնը շարժելով նոցա հետ ընկերացաւ , բայց երբ որ սքա աղէկ մի երկրին ներսերը գացին , յանկարծ պաշարուեցան խուճք մի տեղացի բարբարոսներէն՝ որք սոցա վերայ յարձակելով մեծ մասը սարանեցին , և միւսները ըստիպուեցան փախչիլ . սակաւք կրցան մտկոյիլով նաւը գառնալ :

Միքը պատանին փախտեան շիտթութեանէն միշտ կը կարծէր որ մահը ետին է . այս պէս երկար ատեն անտառաց մէջ աստանդիկ պտրտելէն յետոյ , երաւ բարձր լեռան մի վերայ՝ որ միւս երեցածներէն աւելի անբնակ կը թուէր իրեն , հոն ուժը կտրած հեւալով ու քրտինք թափելով գեհտի վրայ փռուեցաւ մնաց . հաղարումէկ դառն մտածմունքներ նորա միտքը կը վրդովէին , ըստ կնշմարէր որ այն վայրենաբնակ երկրին մէջ ուրիշ բան չէր կրնար պատահիլ իրեն , եթէ ոչ սովէն մեռնիլ կամ կատաղի գաղանաց և կամ գազաններէն ևս աւելի վայրենիներու ձեռքը մատնուիլ : Այն ինչ այս ահուելի խորհրդածութենէն լքեալ կուլար գառնապէս , անբեւոյց մէջ ձայն մի առաւ , վախէն ցաթիկելով ուղեց փախչիլ , մէկէն տեսաւ երիտասարդուհի մի , որ հանդարտաքոյլ դէպի իրեն կուգար , և որ անուշութեամբ նայելով նշան ըրաւ որ կենայ : Այս բանին վերայ պատանին սիրտ առած ընկաւ երիտասարդուհւոյն սուքը , ու սկսաւ լայ հաւաչել ու կրցածին չափ աղաչեց որ գթայ իւր վերայ և ազատէ զինքը այն ցաւալի թշուառութենէն :

Երիտասարդուհւոյն անուն Արիլքո էր ,



զգաց, զի մարդոցս բնականապէս սիրելի է իւր ծնած տեղը, նաև ազգականներն ու բարեկամները զորս ալ չ'սխախտեաներ, զասոնք յիշելով խիստ շատ լացաւ ու հառաչեց, ոչ բան մի կրնար մխիթարել զինքը եթէ ոչ Լնքլին քաջաբերութիւնները զոր ազգականներէն, բարեկամներէն ու հայրենիքէն աւելի կ'սիրէր, բայց թշուառ աղջիկ, չէր գիտէր թէ ինչպիսի ապերախտ ու անպիտանի մի ձեռք կը մատնուէր:

Օրերէնք ազատող նաւը Լնքլիացի էր, որոց համար պատանին աւելի գոհ եղաւ: Ըյս նաւը լի էր հարուստ ապրանքներով ու կուխնէայի եղբքները գտնուած գերիներով որ Պարպատա կղզին պիտի երթար: Ըյս Լնքլեան կղզիներէն մէկն է և մասնաւորապէս խիստ բարեբեր է շաքարի մշակութեան համար որոց ծառայութեանը կ'գործածուին այս եղիկները: Երբոր նաւը խարխիս նետեց նոյն կղզւոյն դիմաց, անմիջապէս լեցուեցան նաւահանգիստները բազմութեամբ մարդկանց, և ինչպէս ուրիշ վաճառքներու՝ նոյն պէս գերիներու վաճառքը շուտ մի սկսաւ:

Յաւերժական ամօթ և նախատիք Եւրոպայ որ մարդկանց այսպիսի անարժան առևտուր մի կրնէ, զոր ուրիշ տեղեր հազիւ թէ կը համարձակին ընել եղանց ու ոչխարաց: Լնքուծին Լնքը տեսնելով որ այս սուրխուր վաճառքին գնողները շատ էին և թէ արք և կանայք ծանրագին կ'ծախուէին, ագահութենէ գրգռեալ, երախտագիտութեան և մարդկութեան բոլոր պարտքերը մոռնալով դժբաղդ Եարիքօն ևս ծախելու հանեց անզգամութեամբ, բոլորովին անօգուտ եղան խեղճ աղջկան արտասուէլն ու յուսահատիլը, զուր էր այն քարատրտէն գրկութիւն և սղարմութիւն խնդրելն, ու զայն երգուցիները թէ գերիի տեղ կամի պահել զինքը, դոնէ այս կերպիւ չբաժնուի, դարձեալ օգուտ չըբաւ իւր ըրած բարեաց յիշատակութիւնը, թէ ինչպէս ազատած էր զինքը այն անգութ վարենեաց ձեռքէն՝ որք պատրաստ էին սպաններու, թէ ինչպէս այնքան ատեն նորա կեանքը պահպանած էր ամէն հարկաւոր եղած պիտոյքը հագալով, և թէ ինչպէս ճոխացուցած էր զայն տեսակ տեսակ պարգևներով, թէ ինչպէս իրեն համար, միայն ձգած էր, ազգականներն ու հայրենիքը և ինչ որ սիրելի բան ունէր, նոյնպէս անօգուտ եղան սրաին ցաւը փարատելու համար ըրած այն դառն կշտամբանքնէ, ըր, ապերախտ անիրաւ, ու գողանաբարոյ

կոչելը, ու հազար ու մէկ անէծքներ գլխուն թափելը, և այսպիսի քսամներ իրեն նագար ծուծեան մի զ'ստուած վկայ և վրէժխնդիր կոչելը, զի Լնքըն խիստ անգութ գաղանէ մի ալ աւելի անողորմ լինելով իսու կըլլար այն խեղճին ամենախրաւացի կշտամբանաց, դառնապոյն քանգատանաց և սրտաշարժ ու սիրալի աղաչանաց, և մանաւանդ գոհ էր մէկ կողմանէ որ ուրիշներ իրենց օտար լեզուն չէն հասկնար, որով կարող չէին տեղեկանալ իւր անզգամութեանը, վերջապէս ծախեց զայն վաճառականի մի, ու ստակը առնելով առանց անգամ մի Եարիքօյն երեսը նայելու կորսուեցաւ գնաց:

Դժբաղդ Եարիքօն կիսամեռ ինկաւ մնաց, իսկ զինքը գնող ոչ ինչ նուազ բարբարոս էր առջինէն, առանց սղարմելոյն լեզի արտասուացը նայելու, քաշելով քաշքուտելով տաբաւ տուէր: Այն կողմանէ Եարիքօյն սրաին ցաւերը զինքը կը հիւժէին, միւս կողմանէ դառն կեանք մի կ'վարէր ու տարապայման աշխատութեամբք բեռնաւորուած էր (որ ատեն մի Եւրոպացիք սովոր էին ընել այս բաները մարդատիրութեան ամեն զգացմունքներէն մերկացած, և այս ամբարշտ սովորութիւնը դազրած չէ բոլորովին, այնպէս վարուիլ այն խեղճերուն հետ. իբր թէ անբան անասուններ են և կամ աւելի գէշ: ) Ըյսպէս քիչ միջոցի մէջ հալեցաւ մաշեցաւ և նիհարնալով իր կենացը խղճալի ընթացքը կնքեց:

Իսկ Լնքը զայն ծախած գնոյն ստակովն ու ստացած հարուստ պարգևներովը, և հօրմէն ընդունած գրամագլխով որ ուղածին պէս վաճառականութիւն ընելու համար սուրված էր իրեն, շատ բան շահեցաւ ու մեծապէս հարստանալով կ'արծենար իւր բողդ դին, ճարտարութեանը ու խելքին վերայ, ու թէ խիղճը զարնէր ըրած ամբարշտութեանը վրայօք, որ շատ անգամ կ'հանդիպէր, ներկայ ունեցած յաջողութիւնը մոտածելով մեկէն մտքէն կը հանէր:

Եայց երկինք որչափ ալ ուշայնէ, դարձեալ անօրէն մարդկանց արժանաւոր պատիւ ժը երբէք չ'մոռնար: Օր թեպէտ և այս անզգամը չափէ դուրս հարուստ էր բայց և այնպէս գոհ չ'ըլլալով ունեցածին վերայ, մաւնաւանդ աւելի հարստանալու փափաքանօք յիշեց այն տեղը ուր երկայն ատեն կեցած էր ապերճանիկ Եարիքօյն հետ, մտքը ընկան այն տեղի արձաթն, ոսկին, ու այն ալուքը որ հոն առատ կ'գտնուէին, ուստի ու



Բայց ցաւս հաղար՝ վշտերս է շատ՝ որն աւսեմ  
Աւլ չեմ կրնար պատմել այժմիկ կը լռեմ...

Շարունակել:

Մեր Յրոտիքն ձի ճարտարութիւնը:

Միջեալ որ երբ գրիչը ձեռքս առած կը խորհէի թէ ինչ կերպով կամ ինչ լեզուաւ խօսելու է մեր այն բաժանորդաց հետ՝ որք ամեն բանին ընդհակառակը կը հասկնան, և որոց բառարանին մէջ ԿՅՆՍԻԿ բառը՝ ապաւնիկ կամ ամեննիւն անառիկ, և ծախու եղաւ ծր՝ ձրի նշանակութիւն ունին, յանկարծ մեր Յրուիչը ձեռքը երեք քսանոց թուղթ բռնած հեւարով շունչը կարածի սէս քովս եկաւ. գրիչս մէկ դի դնելով սկսայ շփոթութեան պատճառը հարցունել. - սա, ըսաւ, այս երկօխ պարբին գիւր, և կ'աղաչեմ որ ինչ ճարտարութեամբ յափշտակելը հրատարակես, որպէս զի զիս բոլորովն պարսպ մարդ մի չի կարծեն, ու գիտնան որ ես երբեմն աղէկ աչալքութիւն կրնեմ պաշտօնիս մէջ:

- Շատ լաւ, կը կատարեմ, ըսի, առաջարկութիւնդ. պատմէ նայիմ այս ի՛նչ ստակ է և ուսկից յափշտակեցիր:

- Մտիկ ըրէ ուրեմն: Երեկ առտու նախ Օրս Մենին, Քէ Յիին, Այբ Այբին, Լչ Յիին, Փիւր Քեին, Մեն Չաին, Վեղ Տէին, Հս Մենին, Գիմ Մենին, Խէ Մէին, Պէ կեինին, դռներ ափ առնելէս՝ և ունայն ետ դառնալէս յետոյ, Պ. Ռա թօփն առնը գացի:

- Խօսքը ընդմիջելով ըսի, կեցիր ի՛նչ կը յիմարաբանես, քերակա՛ն կը կարդաս եթէ ոչ թուչունի լեզուաւ կը խօսիս, զոր չեմ հասկնար ամենեկին:

- Բացատրեմ քեզի, անվճար բաժանորդաց ու Վարդը ձրի կարծողներուն աները ըսել կուզեմ, որոնց անուններուն՝ դիւրութեան համար, միայն սկզբնատառեր միտքս պահած եմ, զորօրինակ Կիրակիս Մարտիրոսեան ըսելու տեղ՝ Կէն Մենին կըսեմ:

- Սորա վերայ ծիծաղս շարժելով ըսի, ամեն բանի դիւրութիւնը գիտես, ստակ առնելուն ինչո՞ւ չես գիտեր: Ի՛նչ և իցէ շարունակէ պատմութիւնդ:

- Տեսայ որ Պ. Ռա Տօն դրանը առջևը

կեցած անուշի համար վարդ ծախողէն երկուօխ պարզի ստիարկութիւն կրնէր, ու վերջապէս խօսքս չերկնցնեմ 60 զուրուշի առաւ, ու պատուիրեց որ միւս օրը գայ ստակը առնէ. վարդածախը գլուխ կախելով, շատ բարի, վաղը կանուխ կուգամ ըսաւ ու գնաց. ու ես ալ առանց խօսք մի բանալու ետ դարձայ: Եւ այս առտու դարձեալ ըսաւ ամենօրեայ ստիարկութեանս յիշեալ տուներ երթալէս ու ամէն օրուան ընդունած ամենապիտիւնց պատասխաններ, վաղ եկոր, ես խմբագրիչը կը գտնամ, Կարեգիւնի երկօր ձեկն կորսած, որ ըսել է երկուքը մէկէն կը կլլեմ, և այն պարսպ խօսքեր առնելէս յետոյ՝ միտքս դրի Պ. Ռա թօփն երթալ, ու տեսայ որ վարդածախին հետ վէճ կրնէր, որ զիս տեսնալուն պէս՝ նայէ, ըսաւ, սա մարդն ալ ամբողջ 12 ամիս է որ ինձի վարդ կը բերէ, բայց դեռ ստակ մի առած չեմ. օրհնեալ ըլլայ սպասէ ըսեմ նէ՛ տարի մի ալ կսպասէ. դուն երեկ բերիր, այսօր գնա վաղը կամ միւս օրը եկուր ըստակդ կը վճարեմ... բայց վարդածախը առնելին նորա խօսքերուն ականջ չի կախելով օձիբէն (եփիս) բռնեց և սկսաւ քաշիւտել ու ստակը պահանջել, և վերջապէս Պ. Ռա Տօն չի գիմացաւ ու բիւր հայհայանքներով երեք քսանոց թուղթ հանեց անոր ստիարկութեամբ. բայց ես խիտն Ռա թօփն ձեռքէն յափշտակելս ու հոս հասնելս մէկ ըրի. ըսէ հիմայ այս քաջութիւն ու ճարտարութիւն մի չէ՞:

- Կեցցէս ըսի, բայց միշտ ճարտար, նա յէ որ միւսներուն ալ այսպէս բան մի ընես, և մէկ մի յափշտակելէդ ետքը ալ քեզի բան մի չէն կրնար ընել. վասն զի այն մարդը որ չի ճանչնար իրաւունքը, պէտք է որ բռնութիւնը ճանչնէ անոր:

- Ինձի խրատ պէտք չէ, բան մի հարցը նեմ, այս շքանին ալ Վարդ պիտի խրկէք ա՛նոնց:

- Ի հարկէ, եթէ չի խրկելու ըլլամք յարաբերութիւննիս կը կարի, ու ալ չեմք կրնար առնելքնիս պահանջել:

- Երբէք, այս հացագործի առուտուր չէ, դուն ասոր հոգը իմ վրաս ձգէ. ու վտար ձեռքը կրկին փորձել յիմարութիւն է:

- Ուրեմն առնելքիդ կը սեպեմ, գնա ինչպէս կ'ուզես այն կերպով առ:

- Շատ լաւ, բայց բանի մի անձիք կէս գինը տալ կուզեն, վասն զի կըսեն թէ Վարդը խոտացաւ վարժապետաց ու կանանց



Հայ գրէ մի օտար լեզուի հեղինակութիւն մի բղնի և Վաղղիայի մէջ բազմաց զարմանք գրաւէ, և անուրանալի է սորա դժուարին ձեռնարկութիւն մի ըլլալը, զի ոչ միայն Վաղղիարէն պարզ լեզու մի կը պարունակի այս գրքոյկին մէջ այլև Վաղղիացի հեղինակի մի ոգին կը փայլի հոն: Թէև բաւական ժամանակ է նորա ՚ի լոյս ընծայուիլը, բայց այժմ պարտաւորեց մեզ ծանուցանել ձեռքերնիս անցնելով: Կը ծախուի ամեն Հայ գրալաճառաց քով, և Տերա Ռիմէո գաղղիացի գրաւաճառին խանութը:

Նախորդ թուով Վարդին ապագայ վիճակը սիրելի ազգայնոց ծանուցանելով, նաև նորա պարունակելիք նիւթերն ալ յիշած էինք. բայց ներկայ ամսոյս մէջ ուրիշ ընտիր նիւթ մի ևս ձեռքերնիս հասնելով կը փութամք ծանուցանել և խոստանալ նորա հրատարակումը:

Այս ընտիր նիւթն է հռչակաւոր Աղեքոսանդր Տիւմայի Յեուի պաշտօնեայք (Les compagnons des Jéhu) ըստած վիպասանութիւնը, որոյ յարգն ու գեղեցկութիւնը ընթերցողաց ուշադրութեանը կը թողումք. և որ կարի երկար լինելով նոր շրջանին սկիզբէն գրքի ձևով Վարդին երկու թուղթը զատ թուանշանով նմա պիտի զննեմք երբեմն:

Այս դժուար և երկար աշխատութիւնը մեր մէկ ուսումնական բարեկամինը ըլլալով, բոլոր ազգայնոց կողմանէ մեր շնորհակալութեամբը վարձատրել կարող եմք միայն:

— Վարդին գործակալութիւնը բաց ի Օրթագիւղէն այսուհետև մեր արգոյ բարեկամ Թիւրքի գրասենեկին յանձնած եմք, որն որ Տերտահճի խանի դրան քով սանդուխին գըլըխն է և ուղղը հոն կրնայ ստորագրուիլ և անգործաբիրն ալ անկէ ընդունել, այս առթիւս կիմացնեմք մեր արգոյ բաժանորդաց որ եթէ պակաս թիւ ունին նէ մեզ ի մացնեն որպէս զի խրկեմք իրենց: Նաև Վարդին առաջին շրջանը գեղեցիկ կաղմուած հոն կը ծախուի:

Երբեմն ծանուցումները Սեղիւն նոյն ըլլալուն պատճառաւ երկուքը մէկ տպարան հրատարակուելով ծանուցումին գրեւը չի ցրուիր, նոյնը կը գրուի:

Ըստ խնդրոյ Արժանապատիւ Սկրտիշ վարդապետի, յետ այսորիկ Վասպուրաճան Արծիւ պատուական Ընտանոցի գործակալութիւնը Վանայ Վարապայ Ս. Նշան Վանուց Սիւրբաններէն Տասպեցի Արժանապատիւ Ղևոնդ վարդապետը պիտի վարէ, որ այժմ քարոզիչ է Վալաթիոյ Ս. Երեսուորիչ եկեղեցւոյն:

Այս պատեհութեամբ կը խնդրուի Արգոյ բաժանորդներէն՝ որ երբ յիշեալ վարդապետին կողմէն անգործաբիրը իրենց ներկայացուի, բաժանորդաբիրը կարելի եղածին չափ փութով վճարելու շնորհն ընեն. ըստ որում գնոյն աժանութենէն զատ այն խմբագրութեան հաւարածոյ արդիւնքն եղած գումարը Վարապայ վանքին պարտուցը սահմանեալ ըլլալով, չեմք տարակուսիր որ ամեն մարդ իւր բաժանորդաբիրը առաջին անգամ խնդրուելուն՝ չղանար վճարելու ՚ի պայծառութիւն նոյն Ս. վանքին և ՚ի յառաջագիմութիւն Ազգին:

Օտանոցոմին յիշել ախոռը Տոբոյանի:

Շարաթ որ Օմիւռնիոյ շոգենաւը պիտի մեկնի Պոլիսէն բազում նուագարաններով Ես-երթհարսին փեսայացուներ սանելու համար, ուստի նորա պաշտպանին կողմանէ՝ որ այժմ հրաւիրելու համար Պոլիս եկած է, կը խնդրուի որ անպատճառ առաջին պակին հարսանիքը պիտի սկսի, թող պատրաստութիւն փեսայացուները նաւը մտնելու:

Ահքը լոյս ըլլա Ես-երթհարսին, Սիւրբիւնը և Օսպիլը կերուի որ զինադադար եղած են, Օմիւռնիոյ մէջ ալ ի հարկէ շատ մի խնամի և փեսայացուներ գանուեցան, որոց սակաւութեան պատճառը նոցա կռիւը համարած էր ու կը գանգատեր:

Իմաստուն կուսանք Օմիւռնիոյ, զն ելքը լապտերօք ընդ առաջ փեսայից և հարսին և մտէք պատրաստի յառագաստ:

Ի ՄԲԱԳ ԻՐ - ՏՆՕՐԵՆ Բ  
ԹՈՎՍԱՍ Գ. ԳԵՌԵԱՆՑ  
ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ի ՂԱԼԱԹԱ Կ. ԳՕԼՍՈՑ  
Ի ՏԳԱՐԱՆԻ ԵՌՎԱՆԵՆՈՒ ՄԻԻՏԵՆՏԻՍԵԱՆ  
ԱՅՅՈՑ ԵՆԵՂԵՑԻՑ ԳՈՂՈՑ ԹԻ 47